

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
15 հոկտեմբերի 2003 թ.  
Պետական գրանցման թիվ 10203332

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

14 հոկտեմբերի 2003 թ.  
Երևան

N 358-Ն/9-Ն

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ  
ՈՒՂԵԿՑՈՒՄՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության դատարաններ ուղեկցումներն ապահովելու նպատակով.

**Հրամայում ենք՝**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործերի թիվ 1035 գորամասի ուժերով դատարաններ ուղեկցել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 356-383 և ցմահ ազատազրկում նախատեսող հոդվածներով մեղադրվող, ինչպես նաև հասարակական առանձնակի հնչեղություն ունեցող քրեական գործերով կալանավորված անձանց՝ դատարանի որոշման հիման վրա:

2. ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներով կալանավորված անձանց ուղեկցումներն իրականացնել դատարանի որոշման հիման վրա ոստիկանության Երևան քաղաքի, Շիրակի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզային վարչությունների ուղեկցող ստորաբաժանումների միջոցով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և ՀՀ ՆԳ նախարարի 22.10.2002 թ. թիվ 553-Ն - 474-Ն համատեղ հրամանը:

**ՀՀ արդարադատության նախարար,  
արդարադատության պետական  
խորհրդական՝**

**Դ. Հարությունյան**

**ՀՀ ոստիկանության պետ,  
ոստ. գեներալ-լեյտենանտ՝**

**Հ. Հարությունյան**

**ՀՀ վճարեկ դատարանի նախագահ՝**

**Հ. Դանիելյան**